

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 60 Տօլ.

Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԿԱԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Կ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Վ Ա Ք Ա Վ Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ

Հ Ա Ս Ց Է

Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Иразункъ»

ВАРНА

Գրառքիւնք եւս չեն
արտոյր

ՎԵՐԱԲՈՐՈՒՄ ՀԻՆ ՎԵՃԻ ՄԸ

Կրկին վեճ մը ծագած է Պոլսոյ Պատրիարքարանին և Կիլիկիոյ կաթողիկոսին միջև:

Պատրիարքարանը հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի օրերուն ծայրայեղութեան տարած վեճը կը վերանորոգէ այս անգամ Նոր բորբոքումը սկսաւ Ատանայի առաջնորդ Մուշեղ վարդապետի եպիսկոպոսացումէն: Պատրիարքարանը իր գօնքօղին տակ առնել կուզէ Կիլիկիոյ կաթողիկոսարանին կրօնական գործերը: Սահակ կաթողիկոս ալ իր նախորդին նման կը մերժէ Պատրիարքարանի ազդեցութեան տակ իյնալ, առարկելով թէ ինք կրօնական տեսակետով աւելի բարձր հեղինակութիւն մը ըլլալով պարտաւոր չէ իրմէ ստորադասէն հրահանգի սպասելու: Սակայն հարկ եղած պարագային Մայր Աթոռի հետ կարծեաց փոխանակութիւն կրնայ ընել անկախօրէն:

Արդէն անվիճելի է թէ Պոլսոյ Պատրիարքութիւնը Թուրքիոյ հայոց համար աւելի քաղաքական քան թէ կրօնական նշանակութիւն և իրաւասութիւններ ունի: Կրօնական խնդիրներու մէջ իր իրաւասութիւնը Կիլիկիոյ սահմաններէն ներս չանցնելու, որովհետեւ հոն եպիսկոպոսապետ մը կայ յանձին Սոյ կաթողիկոսին, որ իր կարգին, ինչպէս էլ միաձայն կաթողիկոսը, իր թեմերուն հոգեւոր գերիշխան պետն է, ինք կը ձեռնադրէ եպիսկոպոսներ, ինք կ'օծէ միւսն և պատասխանատու չէ կրօնապէս արտաքին իշխանութեան մը:

Գալով քաղաքական տեսակետին, Պոլսոյ Պատրիարքարանը պէտք չէ գերիշխող դեր մը տայ ինքն իրեն, ինչ օսմանեան մայրաքաղաքին մէջ հայ ազգային պաշտօնատուն մը ճանչցուելով, չէ կարող Կիլիկիոյ կաթողիկոսարանին վրայ իշխանութիւն բանեցնել: Իրեն դերը պարզապէս այդ չըջանալին համար փոխա-

նորդի մը գերէն չը տարբերի: Բայց խնդիրը կը փոխուի երբ երկուստէք բարեացակամ համաձայնութեան մը գտնուի: Մինչեւ վերջերս Սահակ կաթողիկոսի և Օրմանեան Պատրիարքի միջեւ յարաբերութիւնները լաւ կրնային լինել, քանզի արտաքուստ այդպէս կերեւար, սակայն Մուշեղ վարդապետի Սիսէն եպիսկոպոս ձեռնադրուելէն ի վեր յարաբերութիւնները լարուեցան: Պատրիարքարանը աններող վարմունքով մը մերժեց Սոյ եպիսկոպոսները Կիլիկիայէ գուրս եպիսկոպոս ճանչնալ: Պատրիարքարանի այս վարմունքը ծանր հարուած մըն էր Սոյ կաթողիկոսութեան ազդեցութիւնը բնականաբար, անոր պիտի հետեւէր պառակտումը: Եւ ահա պառակտումէն օգտուողները պիտի ըլլան ոչ թէ հայերը, այլ նախ թուրք կառավարութիւնը՝ որ կուզէ միշտ հայութիւնը բաժան բաժան ընել, և օտար բրբաղանտիութիւնը, գլխաւորապէս կաթողիկ և մասամբ բողոքական:

Կը ցաւինք որ Պոլսոյ Պատրիարքարանը կրկին շատ անպատեհ ժամանակ ընտրած է այդ հին վեճերը վերարձարծելու: Քաղաքական ներկայ պարագաներուն մէջ բնաւ ընաւ ներքին չէ այդօրինակ հատուածական խնդիրներ բորբոքելը: Մեր Պատրիարքարանը այս միջոցիս պէտք է իր ուշադրութիւնը դարձնէ Հայաստանի խեղճ ժողովուրդին, որ արհեստական սովով կը տառապի: Հոն անօթութիւնը բերաւորներու կեանքին կը սպառնայ, հոն հազարաւոր անմեղներ բանտերու մէջ կը հիւծին, հոն թուրքեր և քիւրդեր Հայուն ընաշնչումը կը փութացնեն հոն կառավարութիւնը արտագաղթի կը հարկադրէ հայը, վերջապէս հոն, ամբողջ Հայաստանը, սովով, սրածովեմամբ, բռնաբարութեամբ երբ իր հոգեվարքի օրերը կ'ապրի, ելլել Կիլիկիոյ կաթողիկոսին հետ իրաւասութեան ճշգրիտ խնդիրներ յարուցանել և ազդին մէջ երկպառակութիւններու գուռ բանալ աւելի քան յիմարութիւն է:

ԴՊՐՈՑԱՍԻՐԱՑԸ

Կիրակի օր տեղի ունեցաւ Դպրոցատիրաց նոր ընկերութեան Ընդհ. Ժողովը ի ներկայութեան շուրջ 50 անդամոց, Յանձնախումբի մը կողմէ գծուած կանոնադրին յօդուածները միառմի վիճարանութեան դուրսելով, անշնչան փոփոխութեամբ մը ընդունուեցան, բայց կարծեաց փոխանակութեանց պատճառաւ ժամանակը բաւական անցած ըլլալով, Գործ. Ժողովոյ ընտրութիւնը յետաձգուեցաւ յաջորդ կիրակէին:

Օգտակար կը նկատենք ծանօթացնել մեր ընթերցողաց այդէոր կանոնադրը որ հետեւեալն է:

Կ Ա Ն Ո Ն Ա Ք Ի Ր ՎԱՌՆԱՅԻ ԴՊՐՈՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐ.

Ն Պ Ա Տ Ա Կ

1. — Ընկերութեան նպատակն է՝ Ա. նիւթապէս նպաստել Վառնայի ազգային երկսեռ վարժարանաց ընթացիկ ծախքերուն՝ Բ. իր հասոյթին մէկ մասը կալուածի վերածելով յանձնել Ս. Սարգիս եկեղեցւոյ թաղականութեան հարսնիք, կանութիւն նոյն եկեղեցւոյ՝ Գ. Ապագայ վարժապետները պատրաստելու համար յատկապէս աշխատիլ ամէն գնով:

Մ Ի Ջ Ո Ց Ն Ե Ր

2. — Ա. Կանոնաւոր բաժնեվճարներ Բ. Կամաւոր վեցամսեայ եւ տարեկան տուրքեր Գ. Բացառիկ նուէրներ Դ. Մուտքի տուրք Ե. Հասոյթի բոլոր այն միջոցներ որոնք յարմար կը գտնուին վարչութեան կողմէ:

ԱՆԴԱՄԱՆՑՈՒԹԻՒՆ

3. — Ամէն ազգային երկսեռ անհատ կրնայ անգամակցիլ ընկերութեան՝ ամսական 50 օսանգիմ վճարելով, Անգամ մը կրնայ մէկէ աւելի բաժնիներ գրուիլ, առանց մէկէ աւելի ձայն ունենալու:

4. — Ժողովներու մէջ քուէ տալու համար անհրաժեշտ է 21 տարին լրացուցած ըլլալ:

5. — Անգամ մը որ վեց ամիս իր

բաժնեգինը չէ վճարած հրաժարած կը նկատուի, եւ իրաւունք չունենար քան մը յետս պահանջելու:

6. — Ընկերութեան մասնակցիլու համար պարտաւորիչ է իր մուտքի տուրք վճարել գումար մը, որ 1 ֆր. է պակաս չըլլայ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

7. — Ընկերութեան բոլոր անգամները կը կազմեն ընդհանուր ժողովը, որ կ'ունենայ զիւրան մը ատենապետով մը եւ ատենադպրով մը եւ իրենց փոխանորդներով՝ ընտրուած ժողովոյ մեծամասնութեան գաղտնի քուէարկութեամբ:

8. — Ընդհ. ժողովը կրնայ Գործ. Ժողով մը հինգ հոգիէ բաղկացած, որ կը վարէ ընկերութեան գործերը:

9. — Ընտրուելու իրաւունք կ'ունենան միայն այն անդամներ որոնք 30 տարին լրացուցած ըլլան:

10. — Ընդհ. ժողովոյ զիւանդ հաշուեքներն է միւսնոյն ժամանակ Գործ. Ժողովոյ. որուն հաշիւները կը քննէ ամէն երեք ամիս եւ հարկ դատած պարագային:

Գործ. Ժողովը ամէն վեց ամիսը անգամ մը պարտաւոր է ներկայացնել իր հաշիւները հրապարակաւ: Իսկ իր տարեկան հաշիւը մանրամասնութեամբ պէտք է ներկայացնէ Ընդհ. Ժողովին:

12. — Ընդհ. Ժողովոյ նիստը օրինաւոր կը սեպտի բեր անգամներու մեծամասնութիւնը ներկայ է. հակառակ պարագային նիստը կը յետաձգուի: Երկրորդ հրաւերին ներկայից թիւը ինչ որ ալ ըլլայ օրինաւոր ներկայութեամբ ժողովը վաւերական կը համարուի:

13. — Ընդհ. Ժողովը բացի իր տարեկան նիստէն՝ կը գումարուի նաեւ այն պարագային երբ առնուազն 10 անդամներ կարեւոր առաջարկութիւն կամ բողոք կը ներկայացնեն գրաւոր:

14. — Ընդհ. Ժողովոյ զիւանդ ինքնաբերաբար եւ Գործ. Ժողովը զիւանդ հաւանութեամբ հարկ դատած ատեն, նին Ընդհ. Ժողով կրնան հրաւիրել:

15. — Գործ. Ժողովոյ պաշտօնավարութեան չըջանալ մէկ տարի կը տեւէ եւ վերընտրելի է:

Մնացեալը յաջորդով

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼԸ

Ամերիկայի մէջ Վերաւունքի գործակալութիւնը ստանձնած է Տիար Մ. Գ. Սուգիլեան որուն միջոցաւ ևս կարելի է բաժանորդագրուիլ:

Հասցէն՝

Մ. Գ. ՍՈՒԳԻԼԵԱՆ

18 Տիքս Բլաւ Պոսթօն մէս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊՐԱՅԻԼԱ. 7 Ապրիլ

ԴԱՆՏԻՆԻԱՆԻ ՄԻ

Ժամանակէ մը ի վեր յարեալ զայս- րար, արտասահմանի շատ կողմերը տարածուած հայ գաղթականութեան կեանքն ու յեղափոխական շարքերէն մխթիարիչ լուրեր կը լսենք որ հա- մերախնայութիւն գոյացած է այս եւ ալ այն վայրերը, ինչ որ մեր ազգային գոյութեան ու հայրենիքի ազատու- թեան նպատակին աւելի քան երբէք յուսահատու եւ անհամեմատելիօրէն ոգեւորիչ է:

Այսպէս, մինչդեռ մէկ կողմէ հայ սրտերը մին միւսին մօտեցնելու. եւ անոնց բարոյական ոյժերը իրար կա- պելու ազնիւ ջանքեր երեւան կու- գան, իսկ միւս կողմէն հայու սիրտը վիրաւորելու անխիղճ դաւեր ալ իջողծ կը գրուին:

Այս օրեր Պրայիլայի հայ գաղութը արտակարգ յուզեալ գրութեան մը մէջ կը գտնուի. տեղւոյս հայ քահանան, ինչպէս նաեւ դպիրը՝ նոյնպէս ալ մէկ քանի աշխատակարար պանդուխտներ կը կանչուին թրքական հիւպատոսին կող- մէ հարցաքննուելու համար:

Կանչուածներէ մին (Մովսէս Հըլ- ղատեան) միամտաբար կը հետեւի այս կոչին. եւ հիւպատոսը կը յայտնէ որ եթէ յաջող օրը Տիար Արտաշէս Սը- վաճեանը—այսմ իւղաբերեան—երազ- խաւորէ իրեն՝ այն ատեն կարող է ա- զատ մնալ, եթէ ոչ պիտի արտաքսուի երկրէն զուրա:

Տարիներէ ի վեր Ռուսիայէ հաստատ- ուող եւ միայն քրտնաթոր աշխատու- թեան ենթակայ գաւառացիին համար անակնկալ մը չէ՞ր այս առաջարկը, քանի որ ունի իր օրինաւոր պուլկա- րական անցագրերը:

Թանցանքը միայն այն էր որ Հայաս- տանցիին նախօրօք ստորագրած էր հան- րազրուէթիւն մը որով կը բողոքէր իւ- ղաբերեանի եղբոր Սերովիէ Սըվաճեանի դէմ իբր անարժան քահանայութեան:

Սերովիէ Սըվաճեանի անցեալը շա- տերուն ծանօթ լինելով հանդերձ—թէ Կարմիր-Խաչի ընկերութեան եւ թէ Ընթերցասիրացի գործերուն մէջ—այ- ժմ կը գտնուի էջմիածին քահանայ

ձեռնադրուելու համար: Բայց Ս Հայ- րապետը անոր վարուց եւ արժանեաց մասին հանրազրուէթիւն պահանջիր է: Դաղթականութեան գիտակից մասը՝ իրողութիւնը առանց խեղաթիւրելու եւ Հայաստանեաց Եկեղեցւոյ արժա- նաւորագոյն քահանայ ունենալու նա- խանձախնդրութեամբ ստորագրեր է բողոքագիր մը Ս. Հայրապետին դէ- կելու համար. ստորագրող գաղթա- կան հայերը կոչուած են հարցաքն- նութեան հիւպատոսարան:

Սակայն ինչո՞ւ ստորնանալ եւ դա-ւել, միթէ դաւադիրները չունին ի-րենց արժանի պատիժը:

Սրտի ուրախութեամբ կը յայտնեմ թէ տեղւոյս Տէր Տաճատ քննչ. Դեր- ձակեան ձեռնարկած է Հայաստանի սովետից համար հանգանակութեանը մը որուն արդիւնքը պիտի ուղարկէ պատ- իրաբարան:

ՇՐՋԻԿ-ԳՈՒՐԳԵՆ

ԲԱՐՎԵՆ-ՍԻՒՆԻ ԵՒ ՆԱՅԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԽՆԴԻՐԸ

Երկու ընթերցարաններուն պատ- կանող անհամեմատ մէջ, ոչ պաշտօ- նական կերպով փափաք յայտնուած էր եւ հասկացողութիւններ եղած երկու ընթերցարանները միացնելու համար: Հայկական Ընթերց. վարչութիւնը հա- մոգում եւ հաւատարմող որ միանալով կարելի պիտի ըլլայ իրապէս լաւ եւ յաջող ընթերցարան մը ունենալ Վառ- նայի մէջ, եւ թէ չի միանալու ո՛րեւէ հիմնական պատճառ չի տեսնուող մէջ- տեղը, ընդհանուր ժողովի հրաւիրեց իր անդամները այդ մասին անոնց կամը անելու համար:

Ընդհ. ժողովը գումարուեցաւ. 1907 մարտ 6ին՝ Ներկաները գրեթէ առանց բացառութեան փափաք յայտնեցին մի- անալու: Անմիջապէս մասնախումբ մը ընտրուեցաւ. որուն որոշ սահմաններու մէջ լիազօրութիւն տրուեցաւ «Բար- կէն Սիւնի» ընթերցարանի հետ բանակ- ցելու եւ միութիւնը գոյութիւն հանելու: Ընտրուած մասնախումբը գրաւոր կեր- պով դիմեց «Բարկէն-Սիւնի» վար- չութեան եւ հարգողեց մեր ընդհ. ժո- ղովի որոշումը: 15 օրէն աւելի վերջ

եւ կրկնակի դիմումի վրայ ստացանք հետեւեալ պատասխանը:

Թարգելի պարոն,

«Կը խնդրեմ Ներկութիւնը յանձն առէք «Հայկական» ընթերցարանի վարչու- թեան իմացնելու թէ երկու ընթեր- ցարաններու միացման համար նոյն վարչութեան կողմէ եկած առաջարկը նկատողութեան առնուելով «Բարկէն- Սիւնի» ընթերցարանը ընդհ. ժողով գումարեց:

Բայց ցաւ ի սիրտ ստիպուած եմ հա- ղորդիլ ձեզ որ երկար վիճաբանու- թիւններէ վերջ, նախադասի առաջար- կութեամբ որոշուեցաւ «Բարկէն-Սիւ- նի» ընթերցարանը չի միացնել «Հայ- կական» ընթերցարանին:»

Հաճեցէք ընդունիլ խնդրիմ յար- գանքներս:

Ի դիմաց յանձնարումի մեր

30 Մարտ 1907


Վառնայի հայ հասարակութենէն ա- նոնք որ հետաքրքրուած էին միու- թեան խնդրով, վերը գրուածէն որոշ պիտի տեսնան որ մեր կողմէ Գերմ փա- փաք կար միութեան եւ պատրաստա- կամութեան ամէն զոհողութեան: Մեր- ժողը «Բարկէն-Սիւնի» ընթերցարանն է: Մերմասն պատճառը մեզի անձանթ է եւ մենք մեր կողմէ իրապէս ո՛րեւէ հիմնական պատճառ չենք տեսնար:

Միութեան խնդրով ատեն վարչու- թիւնս աչքի առաջ ունէր մասնաւոր տեղ մը ուր պիտի ըլլար մասնաւոր սենեակներ տրկնանց եւ արանց ըն- թերցարաններու, սրճարանի եւ սրահ մը ժողովի ու լսարաններու համար: Այդ միացեալ ընթերցարանը Հայկական Գրեւպի մը ձեւը պիտի ունենար եւ որը թէ օգտակար եւ թէ պատուա- բեր պիտի ըլլար Վառնայի հայ հա- սարակութեան:

Գալով «Հայկական» ընթերցարանին վարչութիւնն ջանք չի պիտի խնայէ զայն նախանձիկի վիճակի մէջ գնելու համար, մանաւանդ երբ Վառնայի հայ հասարակութենէն գտնայ պէտք եղած նիւթական եւ բարոյական օժանդա- կութիւնը:

Ի դիմաց Հայկ. Ընթ. վարչ.

Վ. Ատենադպրի Ատենապետ Թ. Յ. Թագուրեան Յ. Կ. Ճանկիլյեան



— Ուսկի՞ց է այդ կասկածը... Ի՞նչ ապացոյց ունիք որ ես ճշմարիտ միւ- սիւլման մը չեմ: Թայտնեցէք, պատ- րաստ եմ պատասխանելու:

— Եւ վեր փաշա պահ մը կեցաւ ու մտածեց: Պաշտօնի հարցը ծանր ու մի- յայնգամայն չափազանց կնճռոտ էր:

— Դու ի՞նչ երազներս կը վրդովես. Գոչեց ան՝ արտակարգ չեղտով մը:

— Ես ձեր երազները կը վրդովեմ... Նկատել տուաւ Աւազակապետ հեգ- նական ձեւով մը. բայց ի՞նչու...:

— Այս գիշեր խղճուիլս բան մը չէր զուտ արեան գէտ մը ցոյց տուիր ին- ծի ու ըսիր. «Ասիկա այն ժողովուրդի արիւնով կազմուած հեղեղն է, որուն մէջ քու դիակդ պիտի ինչայ ուշ կամ կանխ...»: Ահա պատճառ մը՝ որ տարակոյսի ներքեւ կը գնէ ճշմարիտ միւսիւլմանութիւնը: Դու ըսել է թէ պաշտպանն ես այն անարգ ժողովուր- ղին, որուն արիւնը ծծել մեր ամենուս պարտքն է:

— Հրամանատար... ընդհատեց Ա- խազակապետը բացազանջական անանկ եղանակով մը, որուն մէջ զրած էր իր հողոյն ամենէն դառն, ամենէն կսկը-

ԲՕՄԱՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը որոշած է որ այս տարի ագարակատէրերէ եւ ագարակ վարձողներէն հողային եւ մեքենանե- րու՝ որոնք երկրագործութեան վը ծառայեն, ո եւ է տուրք չառնէ:

— Նախարարական ժողովը ընդունած է վերջնականապէս որ՝ մեծապէս վը- նասուող հողատէրներու զօրաւոր մի- ջոցներ շնորհուին նիւթական, որպէս զի այս տարուան երկրագործութիւնը չի վնասուի:

Հարկւարուոր պոյսներ կամ չօքոյ- ներ միւսրոյ վրայ նստած են. խիստ շատեր իրենց ունեցած հարստութեանց հետ կորսուած են նաեւ կին, որդի, ամբողջ ընտանիք եւ այլն: Գիւղացւոց ըրած բարբարոսութեանց չափն ու սահմանը անցած է. գերազանցած են շատ տեղեր թուրք բարբարոսութիւնը: Կառավարութիւնը որուն գործունէնու- թիւնը պատիւ կը բերէ—նախ Պ. Տի- միթի. Սիւրբաշի եւ ապա Բօմա- նիոյ— անաչառ կերպիւ կը պատժէ տգէտ գիւղացիին յուզողները:

Թիպէրիս Բօքսսըն անուն բրօքէ- սէօրը ինչպէս նաեւ Տ. Կօկնիչեան եւ նէկօյսսըն որոնք նշանաւոր գրիչներ են պիտի դատաւարտուին յաւիտենա- կան աշխատութեան. գիւղերու մէջ նոր ընկերութեանց բոյներ երեւան ելած են. ասոնց ամենուն տոյնպատա- կը գիւղացին իր ունեցածէն աւելի հողատէր ընել է ամեն պարագայի մէջ, պոյսներու եւ կառավարական պետե- րու—միւսնեւ թագաւորին— մահ բո- պաշտարար. այժմ շնորհիւ ազատական կառավարութեան արթնութեան եւ լրջութեան ամեն բան վերջացած է. ո եւ է գիւղական շարժում չէ մնացած գոհացում տալով անոնց եւ միշտ զուսպ պահելով զանոնք:

Նշանաւոր պանդաներ հանգանա- կութեան ձեռնարկած են՝ ինպաստ կարօտ ընտանեաց կամ որդւոց վերա-ւորեալ կամ մեռած զինուորական. 6 միլիոն ֆր. հասած է ցարգ: Գիւ- ղացւոց կորուստը 15—20000 հոգւոյ կը հասնի: Վնասուած ու բոլորովին ջախջախուած գիւղացիներու մնացած- ներուն օգնելու համար ընկերութիւն- ներ կազմուած են: Կառավարութիւնը մեծ դիւրութիւններ կընծայէ երկրա- գործութեան չի վնասուելուն. համար գիւղացւոց օգնութիւն հասցնելու գոր- ծին:

ԹՂԹԱԿԻՑ

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

67

ԱՌԱՋԱԿԱՊԵՏՐ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՃԻՐԸ

(Շար. նախորդ թիւէն)

Աւազակապետը զարմացաւ այս տե- սակ յանկարծական փնտռութեան մը վրայ. սակայն առանց ո եւ է առար- կութիւն մը ընելու հետեւեցաւ ծա- աային ու ապառանքը մտաւ:

Հրամանատարը դահլիճին մէջ կը ճնմէր. ու յայտնի կերեւար որ մոայլ խորհուրդ մը կը տառապեցունէր զին- քը: Աւազակապետը ներս գնաց ու սո- վորական ձայնով մը,

— Մէք—հապա... մընջեց:

— Նստի՛ր այստեղ, հրամայեց Եւսէր փաշա:

Աւազակապետը թիկնաթոռի մը վը- րայ նստեցաւ ու անխռով եղանակով մը սպասեց:

Եւ վեր փաշա անգամ մըն ալ դահ- լիճին մէջ անկիւնէն միւսը գնաց, ճակտին քրտնքը սրեց ու ծանր ձայ- նով մը ըսաւ.

— Ըսէ՛ ինձի, ի՞նչ ոգի ես գուն:

Աւազակապետը չը պատասխանեց... միայն թէ ժպտեցաւ:

— Չե՛ս խօսիր... գոչեց Եւսէր փա- շա կատաղութեամբ:

— Ի՞նչ խօսիմ... Ի՞նչ է կը հար- ցունէք, նկատել տուաւ Աւազակա- պետը կատարկալ պաղարիւնութեամբ մը:

— Ի՞նչպէս... չե՛մ հասկնար:

— Ո՛չ:

— Կը հարցունեմ թէ՛ «Ի՞նչպիսի մէկն ես գուն»:

— Ե՛ս:

— Այո՛, գուն:

— Պաշիր մընեմ:

— Ատիկա յայտնի է... սակայն քու գոյութիւնդ ինձի կասկած ներշնչել կուտայ... Ըսել կուզեմ թէ՛ ճշմարիտ միւսիւլման մը չես գուն:

Ճալի ու ամենէն վրէժնորդական չէշ- տը, զուք չէ՞ք մտանէր թէ մեր վրայ Աստուած մը կայ. Ի՞նչ է կրէք: Ես երկու տարի է որ ձեր ապարանքին սեմօրէն ներս դրած եմ ոտքս... երբ եզած է որ վատ բան մը ըրած եմ, ե՛րբ եզած է որ պարտականութիւնս չեմ կատարած: Հիմակ ի՞նչ կուզէք ինէ... միթէ այս աշխարհքիս մէջ պա- տառ մը հաց կը մուսմամ, ա՛յն ալ շատ կը տեսնէք: Տէր Աստուած, երբ երազ- ներուդ մէջ արեան գետեր կերեւա- կայեք, ֆաթիլին ի՞նչ յանցանք կայ: Միեւնոյն ատեն՝ դուք ի՞նչու արեան գետերէն կը սոսկաք:

Եւ վեր փաշա կարծես չէր լսեր: Կերպարանքը մթնցած էր, ինչպէս մերկալից ու աղէտաւոր գիշեր մը: Աչքերու մէջ նայուածք կը պատկե- րանար քաղաքի երեւոյթով մը ու չըթուէններէն լպիրշ թրթաղում մը կը թափէր: Սեւ թ մը դարձած էր մարմին մէջ որ կը գալարուի, կը պրկուի ու սակայն կը մնայ չարչրու- մի մը ներքեւ: Օ՛հ, յայտնի կերեւար որ հետզհետէ զարհուրելի պատկեր մը կը բացուէր դէմը... ու ֆաթիլը նո-

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Փոխարքայ կոմս Վարանցով-Տաշքովի դիւանատունը 16,000 ռուպլի յանձնեց Տիֆլիսի Հայոց առաջնորդարանին, հայ սովետականներուն նպաստելու համար

— «Միջոցով և ընկ» անուն նաւթի ընկերութեան ընդհ. ժողովը որոշեց է 30,000 ռուպլի յատկացնել Գանձակի և Երևանի նահանգներու սովետական նպաստելու համար: Նաև 5000 ռուպլի Տիֆլիսի բարեգործական հաստատութիւններուն:

— Ալէքսանտրօսովի մէջ կարապետեանց անձը՝ անդործ իր ամուսնացած քրոջ տունը բնակելով: Երբ քայլը ալիւս կը մերժէ զինք հիւրասիրել, կը յանդգնի մահացու կերպով վիրաւորել զանի, սպաննել ասոր ամուսինը ու վիրաւորել երկու քեռորդիները և օգնութեան հասնող երեք դրացիները, կարապետեանց այս ոճիրներէն յետոյ անձնասպան կ'ըլլայ:

— Ձմեռուան ընթացքին Տըփ-ղիսէն մինչև Գանձակ և Բօրչալուի գաւառները ոչխարներու ահագին ջարդ եղած է: Այս նոր աղէտի մասին Մշակ սա ախար տեղեկութիւնները կուտայ:

«Մի քանի տեղ կոտորվել է ոչխարներէ 40—50 տոկոսը, միւս տեղերում մօտ 80 տոկոսը, կան տեղեր, որ միայն 10—20 տոկոսը Սխալուած չենք լինի, եթէ միջին թիւով ընդունենք, որ կոտորվել է ձմեռացներում արածող ոչխարների քառորդ մասը, բոլորը միասին, հաւանական է որ լինեն աւելի քան հարիւր հազար զլուխ:

«Արգելք ոչխարների ջարդը տարածվել է դէպի Եւրասիա և այնտեղից դէպի Շուշու կողմերը, — մենք տեղեկութիւններ չունինք»:

բէն կարճաճանար արեան գետերու մէջ, մէկ ձեռքը՝ գաղտնի մը, իսկ միւս ձեռքը մարդկային արիւնաթաթաւ դուրսնէր բռնած...

— Շուտ, շուտ... խոստովանէ՛ դու թիւնդ... պոռաց Շէվքի փաշա ցնորական վիճակի մը մէջ... մի՛ ծածկեր ինչ... ըսէ՛, ո՞վ ես դուն:

Ու տանց սպասելով՝ թիկնապահներէն մին կանչեց ու հրամայեց անոր չղթայի զարնէն Աւազակապետը...

Թիկնապահը լռիկ կերպով մը հրամանը կատարեց ու չղթայակապ ֆաթիրը նկուղի մը նմանող առանձնարանի մը տարաւ:

Աւազակապետը բոլոր օրը փակուած մնաց այդ խաւարային առանձնարանին ու ոտքի չընկ մը անգամ չը լսեց:

— Այս ալ ճակատագրիս մէկ խաղն է, մրմնջեց ինքն իրենը՝ Տեսնենք... ասոր վերջը ո՞ր պիտի երթայ:

Ու անկիւն մը կծկուած, ձեռքը ճակտին դրաւ եւ այդ ողորմելի դրութեան մէջ մնաց:

Բնացած էր...:

Կէս գիշերուան մօտ նկուղի մը նմանող առանձնարանին դուռը բաց-

Պոլսոյ ազգ. վարչութեան կողմէ պատուիրակութիւն մը կազմուած է. Երուսաղէմ երթալով վանքին գործերը կարգադրելու պաշտօնով, ընտրուած են Տ. Վահրամ արքեպ. Մանկունի և Արիս էֆէնտի Ֆէսճեան, Օրմանեան պատրիարք այս պատուիրակութեան պաշտօնին վերաբերեալ հրահանգը պատրաստած և վարչութեան հաւանութեան ենթարկած է:

— Վերջերս Բարիկի մէջ մեռած Անդրանիկ Եօաննէսքուի քրոջ և քրոջ աղջկան ու զաւակներուն կողմէ խնդրագիր մը մատուցուած է Պատրիարքին, ժամ առաջ կարգադրութիւն մը ընելու համար հանգուցելոյն կտակին գործադրութեան մասին: Ա. Եօաննէսքու Քրէտի Լիւնի մէջ 158,000 ֆր. և Օտեսայի ու Քիշնէվի մէջ 500,000 ռուպ. պահանջներ ունի եղբոր Պարտաւէրներէն ոմանք կաշխատին եղբոր խոյս տալ իրենց պարտքը վճարելէ: Հանգուցեալին ժառանգորդները կը պահանջեն որ ամբողջ հարստութեան մէկ երրորդը իրենց հատուցուի և երկու երրորդը կրթական ու բարեգործական հաստատութեանց:

— Ձէյթլունի կաթող. փոխանորդը կը տեղեկագրէ թէ քաղաքին և շրջակայի հայ հոռմէականներէն՝ որոնք 265 անձ էին, 97 անձ վերադարձած են իրենց մայրենի եկեղեցւոյ գիրկը: Նոյնպէս Հաճի-Տէսէի ազգայինք որ աւելի առաջ կաթողիկոսութեան դիմած էին, դարձած են իրենց եկեղեցին:

— Պոլսոյ եղբունազատ ատեանը ի բացակայութեան ցմահ բերդարգէլութեան դատապար-

ուեցաւ: Լամբարի մը աղօտ լոյսը ցոյց տուաւ թէ ներս մտնողը փուռապէս էր: Բարեհաճ մարդը վշտով մը համակուած մօտեցաւ իր անգին բարեկամին. որ գլուխը խոնաւ քարին կոթնցուցած կը քնանար: Դողդողով ու խղճով ձայնով մը:

— Փաթի՛ր, ֆաթի՛ր, մրմնջեց, Աւազակապետը իսկոյն աչքը բացաւ ու փուռապէս նայեցաւ:

— Ելի՛ր բարեկամս, ի՞նչ կը քնանաս... հոս շուշու անգամ չսպիրիթ, թոթովեց փուռապէս:

— Ո՛հ կը պաղատիմ, թող զիս... գուցէ հոս գալուդ համար կեանքդ կը վտանգես, դիտել տուաւ Աւազակապետը:

— Ի՞նչ կեանք ունիմ ու զայն վերանգնել վախճամ... Ելի՛ր, հետս եկուր... չեմ ուզեր որ հոս մնամ:

— Մտիկ ըրէ, փուռապէս, մինչև այսօր մեր տեսակցութիւնը համակրութեան արդիւնք էր. բայց ասկից ետքը գիտնալու ես որ անգին ու ծանր պատականութեան ներքեւ կը գտնուիք: Բան մը չէ... հիմակ սիրտդ չը կոտորելու համար դուրս ել:

տեց՝ իբր յեղափոխութեան մասնակիցներ՝ Սմբատ Գաբրիէլեան, Մկրտիչ Հորարեան, Մկրտիչ Աբրահամեան, Ռարոիրոս Մանուկեան, Անդրանիկ. Խասգիւղցի Սիմոն ՔիւքիւքՊողոսեան, Վարդան, Արշակ, Խասգիւղցի Աղաթոն Գրիգորեան, Օեդրակ Թիւրապեան և Պէրպէրեան անձերը:

— Կիլիկիոյ կաթողիկոսին և Պոլսոյ Պատրիարքին միջև անհամաձայնութիւններ կան այս միջոցիս. Կիլիկիոյ կաթողիկոսը կը պահանջէ 1) Պատրիարքարանի թեմերուն մէջ Ամենայն Հայոց կաթողիկոսէն յետոյ իր անունն ալ յիշուի: 2) Հոգեւոր գործերու մասին Պատրիարքարանէն անկախ է և կարծեաց փոխանակութիւններէ Մայր Աթոռին կաթողիկոսին հետ: 3) Ամենապատիւ տիտղոսը անիմաստ Կիլիկիոյ կաթողիկոսին համար պէտք է աւելի հոգեւորական տիտղոս մը տալ: 4) Պատրիարքարանը իբր փոխանորդը կամ ներկայացուցիչը նկատուի հանդէպ կառավարութեան Կիլիկիոյ ազգային ու յարաբերական գործերու առթիւ: 5) Կիլիկիոյ վիճակներէն հառաքուած մոռաքաւ տուրքին կէսը միայն պատրիարքարան զրկուի եայլն:

— Բարիկի թերթերը մեծ գովեստով կը խօսին այս տարուան Սալոնիկի նկարչական ցուցատրութեանց մէջ հայ նկարիչներու գործերու մասին: Ատոնք են Ջաքար Ջաքարեան, Արսէն Շապանեան նկարիչներ, Օեպուհ Ֆէսեան արձանագործ և Էտկար Շահինեան փորագորիչ:



նեմ սա առա՛ծնախանէն ու ազատիմ չղթանքէս... ի՞նչ կըլլայ... վաղը բոլոր ապարանքը տակնուվրայ կը դառնայ ու անմեղ ծառաներն կը բանտարկուին իմ տեղս... միեւնոյն ժամանակ՝ մենք ալ չենք յաղողի մեր նպատակին հասնելու: Մի դարմանար... այն աշխարհքը, որուն մէջ արիւն արցունք թափող ժողովուրդ մը կապրի ու ասանկ հրէշներու հացը կը մատակարարէ, շատ տարբեր չէ այս գարշելի նկուղէն. հետեւաբար սիրտս աւելի հանգստէ և հոս, քան թէ այդ արեան դաշտին մէջ: Գնա, հեռացի՛ր... թող ստուերդ անգամ մը մատնէ քեզ: Հարկաւ այս գաղանք էր յիմարական ժամերէն ետքը. քմահաճօք մը կունենայ ու դարձեալ կաղատէ զիս:

Փուռապէս չառարկեց: Ձեռքը բռնած լամբարը մարեց ու կամաց մը դուրս ելաւ առանձնարանէն:

Արդամեւ, առտուն դեռ լոյսը չը ծագած, Շէվքի փաշա թիկնապահին միջոցաւ կանչել տուաւ Աւազակապետը:

— Մտածեցի՛ր ըսելիքներուդ վրայ:

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն
ՇՍՔԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՏԻՄԻԹՐ ՄԱՐԻՆՈՎԻ

Բրէսլավսկա փողոց Հայկ. Ընթ. դէժ

Պատը ունիմ ծանուցանել յարգոյ հայ հասարակութեան թէ Ջատիկ առթիւ պատրաստած ենք ընտիր եւ շատ համեղ ԳՈՒԶՈՒՆԱՔՆԵՐ փափկաճաշակ յաճախորդներու համար:

Անցեալ տարիներու մէջ մեր գուզուսմէնք ճաշակող յաճախորդներ մեզ յանձնարարեցին ծանուցանել այս անգամ ալ հայ հասարակութեան որ գայ եւ գործնականապէս հաստատեն մեր ապրանքին առաւելութիւնները ու զընեցու չափաւորութիւնը:

3—1 Տ. ՄԱՐԻՆՈՎ

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. « Բ. » [433 էջ] 2 ֆր. ՆՈՒՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱՎԱՆ ԵՐԿՐՈՐԴ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ. Գին 50 րանդիմ

ՀԱՅԻՆԵԼԻՔԻ ՁՈՔԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն: Ձեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմեց ՎԱՌՆԱ. « Ի Ր Ա Կ Ա Ն » ի խմբագրութեան

«Մ Շ Ա Կ»

Օրաթերթ քաղաքական, գրական Բաժնեգիր՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպլի տարեկան:

Հասցէ՝ Խրքագրութիւն «Մ Շ Ա Կ» ի Թիֆլիս Կովկաս

հարցուց հրամանատարը խոստած ձայնով մը:

— Ի՞նչ ըսելիք ունի, փաշա էֆէնտի, պատասխանեց Աւազակապետը:

— Պէտք է յայտնես ինձի քու ո՞վ ըլլալդ, քու ի՞նչ ազգի պատկանիլդ ու միանգամայն քու ի՞նչ նպատակի ծառայելդ:

— Ես ճշմարիտ միւսիւլման մըն եմ... մանկութենէս ի վեր հօրմէս այս կեանքը տեցայ ու սիրեցի... հաճաքը: Բայց թէ չի պիտի հաւատաք, ատիկա ձեր խղճին կը թողու՛մ: Գիտցէ որ ձայն մը անգամ չեմ հաներ ձեր տանջանքներուն դէմ, որովհետեւ բարեկամութիւնդ վայելեցի այսքան ատենէ ի վեր: Ինձի համար միեւնոյն բան է ապրիլը կամ չապրիլը: Ինչու աչքս ետին չը մնար, երբ զրկուիմ աշխարհքէս եւ կամ թէ անոր հրաշալիքներուն մէջ ըլլամ կամ չըլլամ...: Սուտ խօսելու պէտք չունիմ, կրեմ թէ ֆաթիւր մընեմ ու նպատակ է մարդու բարութիւնն ալ, չարութիւնն ալ՝ իր կաշիին տակ տեսնել:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻԻԱ

Էրզրում, Տրապիզոն, Սիվազ վե ճիվարտաքի խաւմէնալի իթ- թիֆագ իթմիշ տիրէր քի ի- տարէի հիւքիւմաթտա էսասլը իսլաւաթ իծրա օլընմատըգճա հիշ պիր վէրկի էօտէմէսինէր:

— Էտիրնէ չէհրինին մուհա- ֆաղասը իշինն եէնի թէտպիր- լէր վէ իսթիհքեմալէր եսքմազ իշինն ասքէրիյէ մուհէնտիսլէրի Սթանպօլտան էտիրնէյէ կէօնտէ- ըրիտիլէր:

— Եէմէնտէն Ֆէյզի բաշտտան ալընան հաւատիսաթ օլ ճիվա- րըն անվալինի կիւն պէ կիւն ֆէ- նա կէօնտէրիյէր Արապ չէյիս- լէրի իլէ ուզլաշմագ մագէտի իլէ թէշքիլ օլընան դօմիսիօն Սապիթ բաշանըն ըէյասէթի ալ- թընտա եէմէնէ կիթմէք իշինն Սթանպօլտան հարէքէթ իթմիշ տիր:

— Մաքէթոնիա ժանտարմա գօմանտանը իթալիալը Տէ ձօր- ճիս բաշանըն պէյաննամէսի իւզ- ըէ՝ ժանտարմա թէշքիլաթը պա- պընտա կէօնտէրիլէն պէշ նօգ- թալարըն հէր հալտէ իծրասը ի- շինն՝ ալթը մուաղլամ տէվլէթ էլիլէրի թարաֆընտան Ալմանիա էլիսի պիր նօթա Պապը Ալիյէ թագաթի իթմիշ իտի Սօն տէ- ֆա վիւքէլա մէճիսի մէզքիւր պէշ նօթալարա միւթապըզ վէ Սուլթանըն արզուսը իւզրէ պիր մազպաթա գալէմէ ալմըշ վէ սէ- րայա կէօնտէրիլէ իտի Սուլթան պու մազպաթանըն իծրասընը պա իրատէ էմր իթտի:

— Ալըմանիալը ժէնէրալ Տիթ ֆիւրտ բաշա՝ Պապը սէրասքէր թարաֆընտան՝ Մաքէթոնիանըն իւշ վիւլայէթլէրիտէ անվալը աս- քէրիյէի թէճէսսիւս իթմէք իշինն կէօնտէրիլմիշ իտի Մէրգուլ ժէ- նէրալ Մաքէթոնիասա ասքէր վէ թօք գուզվէթլէրինին խալը արթըրըմասը իգթիլա օլաղը- նը կէօնտէրիլ տիր:

— Ալպանիատա իսթիլալ եէ- նիտէն պաշ կէօնտէրիյէր Հիւ- քիւմէթէ գարշը ըսեանը պաս- տըրմագ իշինն Միթրօվիցա գօ- մանտանը Շէմսի բաշա վէ Սքիւպ զապթիյէ թագաթը աղասը ալ- տըղը էմիր իւզրէ Բրէշօվայա կիթտիլէր:

— Սթանպօլտա ապրիլ 7տէ էլ- չիլէրին մէճիսի կէօմրիւկ վէր- կիսինին 100տէ 3 արթմասընը գարարա ալտը:

— Պապը Ալի Սթանպօլտա պու- ընան էճնէպի կաղէթաճըլարը- նա էվլէլէրի կիւն պիր իսպար- նամէ իլէ պիւտիտի քի կէօյա- Պուկարիատա պուկարար միւս լիմանլարը թէշքիլ իտէրիլէր ի- միշ Պու պէյաննամէտէ Սթուր- նա սինօրընտաքի վագապը կէօս-

թէրիյօր Այնը մաալտա պէյան- նամէլէր մէմալիքի էճնէպիյէտէ պուլընան թիւրք էլիլէրինէ կէօնտէրիլտի քի տէվլէթլէրէ թագաթի իթսինէր:

Պիզ շահատէթ իտէրիլ քի Պուկարիատա միւսլիմանլար թիւրքիատան տահա սէրպէսթ վէ տահա բահաթ տըրլար էվ- վէթ էքսէրի մահէլլէրտէ թիւրք- լէր վէ թաթարլար խրիսթիան- լարտան տահա բէյլաւաղ վէ սէր- պէսթ եաշիյօրլար:

ՏԱԽԻԼԻԷ

Ֆէլս բրէնս Ֆէրտինանա հազ- ըէթլէրինին Պուկարիատա հիւ- հիւմտար օլմասընըն երկիրմիննի սէնէսի օգոստոս 2տէ իրմալ օ- լաճաղընտան, պու միւնասիպէթ- լէ չէնլիքլէր իծրա իթմէք ի- շինն հիւքիւմէթ եազընտա պէօ- յիւք հազըրըգլարա պաշլայա- ճագ տըր:

— Իքիննի տէֆա օլարադ գուշ- լար իշինն պու ալըն 23, 24 վէ 25ինտէ Սօֆիատա սէրկի ալը- լիյօր Սէրկիլէ իշթիրագ իտէն- լէր իշինն չըմէնտըֆէր պիլէթ- լէրի 100տէ 50 թէնդիլ իտիլի- յօր:

— Գըրգ միլիոն ֆիշէնկ թէ- տարիքինի սօն կիւնլէրտէ հար- պիյէ նէզարէթինտէ միւնագա- սէյէ (նուաղոյթ) գօնուլմուշ օլ- մաղէ, Վիէննանըն Բօթ նամ չիւքէթինէ վէրիլտի:

— Սլիվէն—Գըշլաքէօլ շը- մէնտըֆէրին ինշաաթը խիթամ պուլմուշ օլմաղէ, Մալիստէն ի- թիպարէն իշլէմէյէ պաշլայաճագ տըր:

— Լօնտրատա աշըլաճագ օլան Պալգան սէրկիլիլէն իշթիրաք իթ- մէք իշինն, Շուվատաքի խալը մէքթէպիտէն 12 գըղլար՝ տի- րէթթօր Մ. Բէրսիւքի իլէ եա- գընտա Լօնտրայա կիտէճէքլէր վէ Պուկար խալըլարըն նսւմա- նէլէրինի օրատա սէրկիլէ գօյա- ճագլար: Քէզա Սօֆիատաքի մօտա մէքթէպիտէն սօն մօտա իւզրէ եաբըրըշ օլան բէք կիւզէլ տա- մա շարգալարը Լօնտրա սէրկի- սինէ կէօնտէրիլէճէք տիր:

— Սօֆիատա ինշա օլընմագտա օլան մուրասսամ մէքթէպի (նը- կարչ վարժ) պու եազ իքմալ օ- լաճագ տըր:

— Բաթիթալտա վէ ճիվարտա միւթէտիտ մաատէն ըլըճալա- րընին շաաթը պաշլամըշ տըր:

ԲՈՒՍԻԱ

Բէթրպուրկտա պիր գաշ կիւն- տէն պէրու բօլիսիա սըգը սու- ըէթտէ եօզլամալար իտէյօր, վէ Բէթէրովսէրայրնա ինթիաթքեա ըր թէտպիրլէր էլէ ալիյօր Բէ- վայէթէ կէօրէ Զար աիլէսի իլէ Զատիկի Բէթէրովտա կէչի- ըէճէք իմիշ:

— Կաղէթալարըն պէյանընա նաղարէն սօն եօզլամալարտան անլաշըլմըշ քի՝ ասքէրլէրէ ըս- եան իթտիրմէք մագսէտի իլէ պէօյիւք պիր թէշքիլաթ վար ըմըշ:

Եօզլամալար վասիթասը իլէ 30 քիշի թուլթուլմուշ պուլարըն պիր թագըմը գատըն տըր:

— Բէթրպուրկտաքի մահպուս- հանէնին պիրիսինտէ պուլընան մահպուլըլար երէճէք գապուլ իթմէք իսթէմէզլէր բէնչէրէլէ- ըրին ճալարընը գըրարլար էհա- լի սօգազտա թօբլանուպ վէլվէ- լէ գալտըրըր Մահպուսհանէտէ նիւմայիլէր տէվամ իտէյօր:

— Սէվաստարօլտա պիր պէօ- յիւք սիւհա վէ ֆիշէնկ տէքօսը պուլընտը 13 քիշի թուլթուլտը:

— Պագուտան պիլտիրիլտիկի իւզրէ պահրիյէ գօմանտանլարը վէ գաբտանլարը թաթիլի մէշ- ղուլիյէթ իթմիշ օլմաղէ, բօլի- սիա պուլարըն ճէպրէն թուլթուպ վարօրլարըն կէօթիւրէրէք ի- ֆայի վաղիֆէյէ մէճպուր իտէր իմիշ հէր պիր վարօրըն իլի- մանտան չըգաճաղը էսնատէ 7 գազագ պէքճի գօնուր վէ պիր հարպ սէֆինէսի արգանան կի- տէր իմիշ:

— Օտէսատա մուսլար իթթի- հատը նամ ֆանաթիքլէր թէշ- քիւլաթընը սիւհալարը ալընմա- տըգճա իսքէլէ իշնիլէրի հիշ իշ- լէմէմէք իշինն գարար վէրտիլէր իլիմանտա վարօրլար մալլարը պօշատուպ վէ մալ ալմատըղա- րը սէպէպի իլէ պէքլէմէքտէ տիրլէր իշնիլէր իսքէլէտէ ֆա- նաթիք չէթալարտան մաղլուպ- օլմամագ իշինն ասքէր օրտուսու կիպի սիւհալը վէ իշիլ պէքլէ- մէքտէ:

— Պիւթիւն կաղէթալար Տ ու- մա նըն լալվ օլընաճաղը- նը եաղիյօրլար պու շայէաթ- տան էհալի միւթէէսի օլընիյօր

— Պագու ճիվարընտաքի Պա- լախանի նամ մահէլիտէ պիւ- թիւն իշնիլէր թաթիլ իթմիլէր մատէնլէր իշլէմէյօր:

— Վերհանկէլա վարօրը Նէ- վա նէհրինտէ պուլըլարտան եա- ըլէլէնուպ նակէհան պաթմըշ տըր, տէրուհինտէքի 60 քիշի- տէն 25ի պօղուլմուշ:

ՄԻԻԹԵՆՎՎԻԷ

— Թիֆլիստէ պիր էվտէ 11 տօլու պօմպա վէ Տէրօրիսթ իթ- թհատընըն քեաղըտլարը պու- ընտը:

— Գահիրէտէ Ֆայթօնըլար թաթիլի իշլալ իթտիլէր ֆա- գաթ պիր թագըմը իշլէմէյէ տէ- վամ իթտիլէրի իշինն գալկա վուգու պուլտու: Բօլիսիա գալ- կալը մէնն իթտի վէ չօղլտընը թէվգըֆ էյլէտի:

— Աճէմիստանըն միլլի պան- գասընտան հիւքիւմէթէ իգթիլա

իտէն բարանըն վէրիլմէսինի Մէճիս (Երեսի Ժայռ) գապուլ իթտի:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, Ապրիլ 7
ՋԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱԹ			
Վալօն	100 քիլո.	12 40/15	
Արապա	52-58 լիպ.	8-11	
ԱՐՅԱ			
Վալօն	100 քիլո.	12 30/12-90	
Արապա	42-47 լիպ.	7-7-20	
ԵՈՒԼԱՅ	արապա 33/36 լպ.	5/60.6	
»	100 քիլո.	13-13-40	
ՋԱՎՏԱՐ	արապա 52/57 լիպ	7.60/8	
ՖԱՍՈՒԼԵՆԱ	արապա 100 քիլ	12/21	
ԲԱՐԻՑԱ	100 քիլո	— Խօգ	
Արապա	100 քիլո	Խօգ	
ՏԱՐԸ	արապա	7. 7/20	
ԳՕԼՕՁ	արապա 55-60 լպ.	12. 14.	
ՄԻՍԻՐ 57-58 լպ.	առապա	7.80/8	
»	100 քիլո	10 80-11	

ՊԱԳԱԼԻԹԷ

Վարնա	բնացատրտա	պաղգալիյէ	
մալլէրին	պու կէլնէքի ֆիլայթը, ալթուհ		
Ֆրանք իլէ			
ԳԱՀՎԷ		2/ 3.15	
ՇԷՔԷՐ Նէմցէ		86	
ՇԷՔԷՐ քէսմէլ	սանտըգ	42 80	
ԲԻՐԻՆՃ	ձէնօվա չուվալը	44	
»	Ֆիլպէ	45	
»	Լիւկիլիգ	32	
Բիգօ	»	53.	
ԿԱՁ Սանտըր		10 20	
ՁԷՑԹԻՆ	կաղը քիլո	1-25/1-45	
ԳՈՒՐՈՒ	իւզիւմ	50	
ԵՈՒՄՈՒԹԱ	100 աւէթի	4.60	

ՆԵՐԿԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲՈՒՍՉՈՒՔ

Ժամանակէ մը իվիր հաստատուած այս ներկի գործարանը կը ներկէ ա- մեն տեսակ եւ գոյներով բաժնակեղէն եւ բրդեղէն ապրանքներ, Հագուստ- ներ ալ կը մօքրէ ու կը ներկէ յա- ճախօրքին ուզած գոյնին յար եւ նը- մանը, եւ մասնաւորապէս մանած ներկիւն, համար ընթարճակ յանձնո- րարութիւններ կը ստանձնէ. չափա- գրներով Անգլիական ինտիկօ (չիվիտ) յար եւ նմանը ըլլալու պայմանաւ:

Ինչպէս Բուսչոքի նոյնպէս ալ Վանաշի, Ֆիլպէի եւ ուրիշ տեղերու վաճառականներ թող հաճին անգամ մը դիմել մեզ եւ փորձով հաս- տատել թէ անայլալ եւ մաքուր գոյ- ներով կը ներկենք եւ յանձնարարու- թիւնները փովթով կը գործադրենք:

Դիմել այս հասցէին

Տ. Ղուկաս Օգանեան

ուլիցա ֆապրիլցնա նւ.14

ԲՈՒՍՉՈՒՔ

ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ

ԱՂԷՔԱՆՏՐԻԱ

Ճալի քիպանաի դէն քիւ 18

Տիար Ս. Շէքերեանի վարչութեան տակ գտնուող այս ծովագերեայ եւ օդաւտ պանդօղը իր մաքուր թեմքը եւ ամեն կատարելութեամբ յանձնա- րարիլէ մէր հայրենակիցներուն, Այ- ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր ճաշարան ջրաբերիւն եւ եւրոպական ճաշակով մաքուր եւ համաթամ կերա- կուրներով, Գրնբըր չափաւոր են:

Издатель: Д-ръ М. Торосианъ

печатница Д. Тодоровъ и С-не —Варна